

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 113

Փրկութիւն – Աւարտելով Քրիստոսաբանութեան ուսումնասիրութիւնը՝ Յիսուս Քրիստոսի անձի ու յատկանշերի վերաբերեալ, այժմ գալիս ենք Քրիստոսի աշխատանքի ուսումնասիրութեան: Այս աշխատանքը յայտնաբերուեց բացայայտօրէն հրեշտակի կողմից որն յայտարարեց Քրիստոսի յղացումը՝ որն պիտի կոչուէր «Յիսուս, որովհետեւ Նա Իր ժողովրդին կ'փրկէ իրանց մեղքերիցը» (Մատթէոս 1:21, նաեւ տեսէք Ղուկաս 2:11, 30): Իրականում, Աստուածաշնչի կենդանական եւ շարունակական թեման կամ նիւթն է փրկութեան թեման, որն Աստուած յայտնեց մարդուն հենց սկզբից Ծննդոց 3:15ում՝ առաջին Աւետարանը, եւ շարունակուեց է մինչեւ Յայտնութեան գրքի վերջը: Սուրբ Գիրքը լի է «փրկիչ», «փրկել» ու «փրկութեան» բառերով:

Ինչի՞ց փրկւած – Ամենաբնական հարցումը այս նիւթի առթիւ այն է թէ՛ «ի՞նչից փրկւած»: Աշխարհի մարդկանց մեծամասնութիւնը կ'ընդունեն թէ փրկութիւն պէտք ունեն, որ պէտք ունեն ազատուել շատ բաներից՝ օրինակի համար ձանձրանալի ու տխուր կեանքից, աղքատութիւնից, ցածր վճարման աշխատանքներից, հիւանդութիւնից ու տառապանքից, ամեն ձեւի յարաբերական դժարութիւններից, գրգռիչ ժողովրդից, թշնամիներից, սոլիդարիւններից, եւ շատ ուրիշ ցատներից ու վշտերից: Նոյնիսկ եկեղեցում, թէպէտ բոլորը ընդունում են որ մենք Յիսուսին պէտք ունենք, փրկութիւնը որը շատերը քարոզում ու մատակարարում են դարձեալ այս նոյն բաներից է: Այսպէս քարոզչութիւն եւ ուսուցումը հակասութեամբ պայտուարում է եւ վտանգներով լի: Եթէ այս է եկեղեցու փրկութեան պատգամը, ապա այն անձեր որոնց խնդիրները չեն լուծուում կամ այն անձեր որոնք չունեն այսպիսի խնդիրներ, Քրիստոսն ու Նրա փրկութեան պատգամը դառնում են կասկածելի, ոչ վերաբերող, ոչ անհրաժեշտ, անօգուտ ու նոյնիսկ տարօրինակ:

Ուստի ո՞րն է փրկութեան աստուածաշնչային պատգամը: Երբ մենք քննենք Աստուածաշունչը շուտով կ'նկատենք թէ «փրկութեան» բառը գործածուել է տարբեր կերպերով: Այդ նշանակում է փրկել կամ ազատել դժարութիւնից, վտանգից, պատերազմից, կամ հիւանդութիւնից: Սակայն, կայ նաեւ այս բառի կամ գաղափարի ծայրագոյն իմաստը: Մենք տեսնում ենք այս հատուածներում ինչպէս Մովսէսի 1:14-18 եւ Ամովս 5:18-20, ուր անմիջական ենթահողը Տիրոջ մօտահաս դատաստանն էր Յուդայի ու Իսրայէլի վրայ, իրենց յարատեւող եւ չզղջացող անհնազանդութեան համար: Սակայն, դրանց ծայրագոյն ակնարկութիւնն է Տիրոջ վերջին օրը, ներկայացւած ուշագրաւ եւ սարսափելի կորստեան ու մթութեան պատկերներով՝ Աստուծոյ տիեզերական դատաստանը բոլոր մարդկութեան վրայ:

Աստուծային դատաստանի պատգամը նաեւ ներկայ է Նոր Կտակարանում (Եփեսացիս 5:6, Բ. Պետրոս 3:7, Յայտնութիւն 14:10-11): Աստուածաշունչը նկարագրում է այս օրայ մի կործանարար պատկեր, երբ Աստուած կ'թափէ Իր անզուսպ բարկութիւնը բոլոր ժամանակների մեղաւորների վրայ (Մատթէոս 8:12, 25:41, Մարկոս 9:48, Յայտնութիւն 20:11-15):

Սերտելով Աստուծոյ վարդապետութիւնը, բացատրուեց թէ Աստուած յաւիտենական սուրբ, ուղղարար եւ արդար է. եւ ուստի Նա ոչ աչքաթող է անում ոչ էլ կարող է աչքաթողել մեղքը, իսկ ատում ու դատում է դրան: Նաեւ մարդու վարդապետութեան դասընթացքում նշուեց թէ իրենց մեղքի պատճառով, Ադամ ու Եւան ընկան Աստուծոց հեռու եւ պղծութեան վիճակում. եւ հետեւաբար բոլոր մարդ արարածներ աշխարհ են գալիս որպէս մեղաւորներ, մեղսալի ու պիղծ բնութեամբ, Աստուծոյ դէմ թշնամութեան մէջ. եւ ուստի հենց ծնունդից իրենց գտնում են մի սուրբ եւ արդար Աստուծոյ բարկութեան ու դատաստանի տակ:

Հաշի առնելով այս բոլորը, յստակ է թէ երբ իստում ենք մարդու փրկութեան առթիւ, իր ծայրագոյն իմաստով, դա անշուշտ չէ ձանձրանալի կեանքերից, վատ աշխատանքներից, ընտանեկան խնդիրներից, հիւանդութիւնից, դժարութիւններից ու նոյնիսկ թշնամիներից: Մարդու վիճակը ու խնդիրը շատ աւելի ծանր է ու անսահմանօրէն լուրջ քան սրանցից որեւէ մէկը՝ նոյնիսկ եթէ միացւած: Աստուածաշունչը պարզ է թէ ծայրագոյն իմաստով մեղաւոր մարդու ամենամեծ թշնամին սուրբ ու ամենագօր Աստուածն է, եւ ուրեմն մարդս պէտք ունի փրկութիւն հենց Աստուծոց ու Իր սիրարկու դատաստանից: Մենք պէտք ունենք ազատութիւն Աստուծոյ գալիք, սոսկալի բարկութիւնից ու զայրոյթից՝ մեղքի ու մեղաւորների դէմ, որն են բոլոր մարդ արարածներ հենց ծնունդից:

Ոչ շատ Քրիստոնէաներ այս կէտից տեղեակ են, որովհետեւ ունեն թերի պատկերացում՝ թէ ով է Աստուած, ու նաեւ թերի պատկերացում՝ թէ ով է մարդ, ինչպէս յայտնուած է Աստուածաշնչում: Եւ իրականում, այս է հիմնական պատճառը թէ ինչու շատեր ունեն փրկութեան բնութեան ու ծաւալի առթիւ եղած ծանծաղ ու թերի հասկացողութիւն:

Փառք Աստուծուն, Աստուածաշունչը նաեւ յստակ է թէ կայ փրկութիւն մեղաւոր մարդու համար: Եւ այս դասընթացքում նայելու ենք եւ ուսումնասիրելու ենք թէ Աստուածաշունչը ինչ է սովորեցնում այս փրկութեան մասին՝ իր բնոյթը, կատարումը, ազդեցութիւնը ու ծաւալը: